

դանադիր քանդակները եւ ըստ դրաւած իւրաքանչիւր սիւնակի կամ անկեան ճիշտ համեմատութեամբ յօրինուած. ընդհանրապէս բաւական անյաջող են դարձեալ դռնակներու ներքեւի կողմը քանդակուած Միքայէլ եւ Գաբրիէլ երկու հրեշտակապետներն ալ, որոնց թեւերէն մին բոլորովին զոհուած է: Դիտենք հոս յատկապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որուն երկայն եմիփորոնը բոլորաձեւ պարուրուած է ուտերուն շուրջ, ըստ ամենայն յիշատակի, զոր կը տեսնենք 2 - է դարերու փրդոսկրէ քանդակներու վրայ եւ ըստ ամենանոր տիպարի որ տակաւին այսօրուան սովորական կիրառութիւնն է: Ոչինչ նոր ընդ արեւակամբ:

Արդ, աչքի առջեւ ունենալով այս ընդհանուր կարեւոր դիտողութիւնները, մտնենք մեր առաջարկեալ նիւթին քննութեան՝ մի առ մի զննելով Լուսաւորիչի խճանկարը վեցերորդ դարէն տասներորդին իջեցնելու համար յառաջ բերուած պատճառաբանութիւնները, եւ միեւնոյն դարերու սանդուղի աստիճաններու կարգով վերստին բարձրացնելու համար դայն իր շինութեան 2 դարուն:

Նախ երկու համեմատութեան եզրները որ առնուած են իրրեւ իրարու հակադիր երկու զանազան շրջաններու սահմանածայր կամ յայտարար, իրականութեան մէջ գոյութիւն չունին. երկուքն ալ միեւնոյն ականակիտ աղբիւրէ բղխած վճիտ առուակներ են եւ միեւնոյն բիւզանդական գեղարուեստի հիանալի արտայայտութիւններ են: Միեւնոյն Յուստինիանոսն է որ հիմնած ու զարդարած է իր կայսերական ճոխութեամբ, իբրեւ բիւզանդա-

կան ճարտարապետական արուեստի գլուխ գործողներ, թէ Հռաւեննայի Ս. Վիտալի եկեղեցին եւ թէ Կ. Պոլսոյ Աստուածային Իմաստութեան նուիրուած Այա Սոփիա հոյակապ տաճարը. եւ չորս դար վերջը միեւնոյն կայսերական ճոխութեամբ դարձեալ յօրինուած է հայազգի Վասիլ Բ. կայսեր Յայամաւորքը, իբրեւ հրաշալի գլուխ գործող մը բիւզանդական մանրանկարչութեան արուեստի: Երկուքն ալ հասարակապէս կը պատկանին իրենց երրորդ հարազատին հետ, Վասիլ Ա. հայազգի կայսեր անուամբ հռչակուած մանրանկարչական ուրիշ գեղարուեստական թեան մը, միեւնոյն գեղարուեստական շրջանին, ուր պարծանք է մեզ հայոցս համար տեսնել ներշնչող եւ ոգեւորող հայազգի կայսրուհի մը եւ հայազգի երկու կայսրներ. երկուքն ալ հաւասարապէս կը պատկանին բիւզանդական ոսկեդարուն, եթէ բիւզանդական բարձր ուղեք առնել իբրեւ գեղարուեստի յատուկ շրջանի մը նշանաբան: Որովհետեւ, ինչպէս որեւիցէ սեպհական շրջան գեղարուեստի ճաշակներու եւ ոճերու արտայայտութեանց մէջ, այսպէս ալ բիւզանդական ոչ երբեք յանկարծատիպ երեւոյթ մ'եղած է: Ունի ընդհանրապէս իր աստիճանաւոր յառաջխաղացումը, զարգանալով հետըհետէ նորահելլէն հիման վրայ յաջորդաբար բերուած եւ ազդեցութեամբ արեւելեան, մանաւանդ յատկապէս ասորա-եգիպտական ներշնչման տարրերով:

Հ. ՅՈՎՀԱՆ ԱԻԳԵՐ

(Շարունակելի)

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

ՏԻՐԱՄՕՐ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Շար. Բազմ. 1954, Բ. 8-10, էջ 233)

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ Բ .

ԱՆՏԵՂԻ ԵՒ ԹԻԻՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Տիրամօր նուիրուած տարուան ընթացքին (1954), Անարատ Յղութեան մասին ուսումնասիրութիւն մը հրատարակած էինք⁽¹⁾: «Սիոն»ի⁽²⁾ եւ «Շողակաթ»ի⁽³⁾ մէջ խկոյն կարծիքներ յայտնուեցան նոյն նիւթին շուրջ: Կը փութանք քանի մը խորհրդածութիւններ եւս աւելցնել՝ իբրեւ եզրափակում:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Ն. Եպս. Ծովական ուղած է կարգ մը նկատողութիւններով քննադատել մեր ուսումնասիրութիւնը: Դժբախտաբար այդ տողերը, աճապարանքով գրուած, կցկըտուր մէջբերումներով եւ չափերտներով, ու մանաւանդ՝ հեղեական եւ արհամարհոտ բացատրութիւններով խառն, մեզի տարակուսիլ կու տան յօդուածագրին քրննական անաչառութեան:

Խօսինք հակիրճ փաստերով:

1. — Մեր շարականներէն քաղելով, հինգ ենթարաժանութեան մէջ հաւաքած, դասաւորած ու մեկնած էինք «Անարատ Յղութեան» ի նպատակ վկայութիւններ: Ապա, վեցերորդ բաժնի մը մէջ, միահաղոյն ներկայացուցած էինք «Անարատ Յղութեան» հակառակ կարծուող 7-8 հատուածները, ուր կը յայտնուի «մաքրագործում»ի գաղափար մը Ս. Կոյսին մէջ, Աւետման առթիւ: Հուսկ, ջանացած

էինք, նախորդներու հետ բաղդատելով՝ ճշտել «մաքրագործում» կամ «մաքրագործում» եզրին նշանակութիւնը. առ այս՝ դիմած էինք նաեւ յետին դարերու մէջ յայտնուող հեղինակաւոր հայ աստուածաբաններու մեկնութեանց:

Ն. Եպս. Ծովական ի՞նչ կ'ընէ ասոնց դիմաց: «Մաքրագործում»ի ի նպատակ չափաւոր մեր վկայութիւնները միայն կը շարէ, յետոյ անոնց հեղինակներուն առնուները կը թուէ, եւ ասոնց ուրիշ ո՛ր եւ է նորութեան, կ'եզրակացնէ՝ իբրեւ թէ մենք խորապէս չենք ուսումնասիրած հարցը:

Այս ո՞րքան միամիտ պիտի ըլլան «Սիոն»ի ընթերցողները, որ խկոյն համոզուին այդ ըսածներուն:

2. — Նմանապէս Գրիգոր Նարեկացիի ականարկելով, թուած էինք ութը վկայութիւն՝ ի նպատակ «Անարատ Յղութեան», եւ հուսկ այն տողը՝ ուր «մաքրագործեալ» բառը կը գործածուի: Համեմատական վերլուծումի փորձէ մը վերջ, դիմած էինք

(1) Բազմավեպ, ՃԺԲ. (1954), Բ. 5, էջ 155 - 168:

(2) Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ - Մեր նախնեաց հաւատքը - Նկատողութիւններ: Սիոն, ԻԸ. (1954), Բ. 7-8, էջ 200-203:

(3) Գ. Պ. - Աստուածամեծի Անարատ Յղութիւնը: Շողակաթ, Գ. (1954), Բ. 9-10, էջ 290-291:

նաեւ Նարեկի հեղինակաւոր մեկնիչ՝ Նալեան Պատրիարքի բացատրութեանց, առնոք ալ յայտնապէս ի նպատակ «Անարատ Յղութեան»:

Իսկ Ն. Եսայ. Ծովական ի՞նչ կ'ընէ: «Մաքրագործեալ» ի վերոյիշեալ վկայութիւնը կ'ընդօրինակէ (միւսներուն մասին բացարձակ լռութիւն), եւ կ'եղբակացնէ՝ իբրեւ թէ իմ ուղեղս անգոր է փշրելու կանխակալ կարծիքներու կաշկանդէն չլուծաները:

Եւ «Սիրոն» ի բնութեցողները այսքանով պիտի զոհանա՞ն, առանց քննելու մետալին միւս կողմը:

3. — Անցնելով Ս. Ն. Շնորհալիին, մեր յիշատակած երեք վկայութիւններէն զատ, ի նպատակ «մաքրագործում» ի դադարփարին, Ն. Եսայ. Ծովական երեք հատ եւս կը յաւելու: Շատ բարի: Բայց եղբակացութիւնը. նշանակալից է. «զուր է փնտռել վանխակալ կարծիքներէ զերծ եւ քրիստոնէական դաւանանքի հանդէպ աննախանձ ու անկողմնակալ սրտամոռներ ի նուիրուած զրիչներ Բագմավէպի հովանիին տակ»: Սրբազանը իր քննադատական ուղղած էր մէկ անձի, Շնորհալիին անուանակից կոչելով զայն (!!!). արդ, ի՞նչ կը նշանակէ այս ընդհանրացումը, ո՞վ են Բագմավէպի այդ նախապաշարեալ յօդուածագիրները: Ասիկա իսկ ինքնին պակաս մը չէ՞ առարկայականութեան:

Բայց դառնալով մեր խնդրին, ի՞նչ պիտի ըսէ Ն. Եսայ. Ծովական (ու նաեւ իր ընթերցողները), եթէ հիմա յիշատակենք Շնորհալիէն վկայութիւն մը, ուր Տիրամայրը «մաքուր» կը կոչուի նախ քան Ս. Հոգիին եկաւորութիւնը.

«Բարբառ աւետեաց ձայնիւ

Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն.

Առ քեզ առաքեմ, մաքուր,

Պատրաստել տեղի տէրունուոյն» (4):

Ո՞ւր է Ն. Եսայ. Ծովականի քննական անկողմնակալութիւնը, առարկայականութիւնը: Ահա՛ տեղը, ուր՝ թեր ու դէմ բանաճեւերու համեմատութեամբ՝ պէտք էր խորանար իր ուսումնասիրութեան մէջ. եւ սակայն ոչինչ, բայց եթէ նախատական տողեր, քննական զիտողութիւններու երեւոյթին տակ:

4. — Իգնատիոս Վրդ. ի վկայութեան մասին (ի նպատակ «մաքրագործում» ի) մեր կատարած նկատողութիւններուն մէջ եւս կանխակալ կարծիք կը տեսնէ: Ինչո՞ւ. որովհետեւ այդ տողերը մանրամասնօրէն վերլուծելով (ինչպէս նաեւ Շնորհալիինները), եղբակացուցած էինք փաստացի՝ թէ այդ մաքրագործումը, Աւետման օրը, ո՛չ թէ մաքրագործում մըն է սկզբնական մեղքէն, այլ՝ ցանկութենէն եւ անոր հետեւանքներէն:

Սակայն Ն. Եսայ. Ծովական, ըստ իր սովորութեան, կարեւորութիւն չի տար այս նրբերանդներուն. եւ առանց քննելու վերոյիշեալ «մաքրագործում» ի մասին Հայ. եկեղեցւոյ աստուածաբաններէն տրուած յաջորդական մեկնութիւնները, դարերու ընթացքին, ծաղրանքի կ'առնէ մեր դաւանա-սրտմական եղբակացութիւնները:

5. — Նոյնը՝ վարդան Վրդ. ի վկայութեան մասին. ըստ Ն. Եսայ. Ծովականի, «Անթառամ Ծաղիկ» Մեծացուցէի մեկնութեան մէջ՝ Անարատ Յղութեան դադարին իսկ չկայ: Դժբախտաբար փաստեր ալ չի տար: Վկայութիւն մը միայն կը յիշատակէ նոյն հեղինակին մէկ շարականէն. «գծմեալն այսօր օրինօք բնութեան»: Ասիկա, սակայն, մեր ըսածնե-

(4) Բանգ չափաւ, Վենետիկ - Ս. Ղազար, 1830, էջ 365:

րուն հակառակ չէ, վասնզի չի խախտեր Ս. Կոյսին Անարատ Յղութիւնը: Ս. Կոյսը, այո՛, բնական զաւակն է Յովակիմի եւ Աննայի, «օրինօք բնութեան», բայց զերծ է սկզբնական մեղքէն, յղութեան առաջին իսկ վայրկենէն, հետեւաբար անարատ յղացած է:

Ինչ որ կը նշմարուի, Ն. Եսայ. Ծովական տարտամ եւ չփոթ դադարփար մը ունի «Անարատ յղութեան» մասին, ինչպէս քիչ վերջ, աւելի մանրամասնօրէն պիտի ցուցադրենք:

6. — Տաքեւացիէն ալ վեց վկայութիւն հաւաքած էինք՝ ի նպատակ Անարատ Յղութեան, եւ համեմատած այն միակ բացատրութեան հետ, ուր յայտնապէս կը ժրխտուի Տիրամօր զերծ ըլլալը սկզբնական մեղքէն: Եւ մանրամասնութեանց իջնելով, այդ առթիւ, քննած էինք Տաթեւեան վարդապետութիւնը, ու վկայութիւններով ալ փաստած՝ թէ Տիրամայրը, թէեւ յղացած սկզբնական մեղքով (ըստ Տաթեւացիին), բայց արդէն իսկ սրբուած էր Աննայի արդանդին մէջ, նախ քան լոյս աշխարհ վալը, ու դարձած անմեղանշական՝ նոյնիսկ թեթեւ մեղքերու հանդէպ: Իսկ Աւետման օրը, Ս. Հոգիին եկաւորութեամբ՝ բոլորովին ջնջուած էր նաեւ մեղքի արմատը, ցանկութիւնը:

Այսպէսով ցուցադրած էինք «մաքրագործում» ին իմաստը՝ Տաթեւացիի ըմբռնումին համեմատ:

Բայց Ն. Եսայ. Ծովական այս բոլորին մասին կը լռէ: Կը զոհանայ ընդօրինակելով Տաթեւացիի այն հատուածը՝ ուր կ'ըսուի թէ Տիրամայրը զերծ էր սկզբնական մեղքէն. եւ կ'անցնի իր տղածոյ եղբակացութիւններուն, եւ կը պահանջէ որ մենք խորապէս ուսումնասիրենք հարցը (!?!):

Ն. Եսայ. Ծովական չի՞ անդրադառնար որ այսպէսով ինք կը զլորի ծուղակին մէջ: Զէ՞ որ էջ մը առաջ ըսած էր՝ թէ

Տիրամօր սկզբնական մեղքով ծնած ըլլալը եւ Աւետման օրը սրբուելը՝ նոր կարծիք մը չէ (ընդգծումը իրն է), այլ զոյութիւն ունեցած է հինէն ի վեր: Եւ ատոր իբրեւ ապացոյց, կը դիմէ հիմա Տաթեւացիին, առանց նկատելու որ, ըստ Տաթեւացիին, Տիրամայրը Աւետումէն շատ առաջ սրբուած էր սկզբնական մեղքէն:

Ի՞նչ... Ն. Եսայ. Ծովական արդեօք տեղեակ չէ՞ Տաթեւացիին զանազան զբոլորութեանց. բայց զոնչ մեր յօդուածին մէջ յիշատակուածները տեսած ըլլալու է: Արդեօք մեր յօդուածն ալ ամբողջապէս չէ կարգացած:

7. — Վկայութիւններ հաւաքած էինք Յակոբ Պարբ. Նալեանէն, Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսէն վաւերացուած Քրիստոնէականէ մը (1850), ի նպատակ Տիրամօր Անարատ Յղութեան:

Ն. Եսայ. Ծովական կը պատասխանէ ըսելով՝ թէ այդ կէտին մէջ Նալեան չեղեր է Հայ. եկեղեցւոյ ուղղութենէն, Քրիստոնէականն ալ արժէք չի ներկայացրեր, «իւր չփոթ եւ անդոյժ բացատրութիւններով»:

Ասաց եւ եղե՞ւ... Այդ Քրիստոնէականը շատ յստակ է եւ շատ ալ զգուշաւոր իր բացատրութեան մէջ: Մենք անցեալ անգամ զրաբար բնադիրը դրած էինք. այժմ կու տանք աշխարհաբարը, չփոթութիւնը փարատելու համար.

«Ոչ ոք ծնած է, եւ ոչ ալ կը ծնանի, առանց շաղախուելու անոր (Ադամի) մեղքին: ... Բացի անոնցմէ՝ գոյս Աստուած բացառիկ շնորհով ուզեց պահել, ինչպէս Աստուածածնի մասին կը փարզէ մեր Հայաստանեայց եկեղեցին՝ Շարականի երգերուն մէջ. «Բանաւոր երկիր, Տիրուհի, եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց: Անբաւաւ ծաղիկ, անդաստապարտ շաղախ»: Կը յաւելու նաեւ հատուած մը Նարեկացիի Աստուածածնի ներդրէն:

8. — Հուսիկ, Ն. Եպս. Ծովական մեր գրութիւնը կը դատապարտէ, իբրեւ «սը-խալ, անհիմն եւ յանդուրժեալ քաջքուրդ... որ ոչ մէկ առնչութիւն ունի ճշմարտութեան հետ»:

Եւ այս բոլորը, զգուշացնելու համար իր «հաւատարմութեան» եղբայրները՝ որ չսայ-թաքին» մեր «գրութեան» միակողմանի եւ ծեծեծեղուն դարձուածքներէն»:

Դժբախտաբար, այս հաւատարմութեանը դուրիկ են քննական արժէքէ՝ իրենց փաստերուն նման: Եւ եթէ Ն. Եպս. Ծովական մեր գրութեան մէջ կ'ուզէ նշմարել՝ ճշմարտութիւնը խեղաթիւրելու դիտումնաւոր նպատակներ, կը խորհինք թէ այդքանն իսկ արդէն դատապարտելի մտածութիւն մըն է, եւ անկողմնակալ քննադատի կամ բանասէրի մը համար՝ անվայել դործ մը: Փաստերը թող խօսին:

Փոխադարձաբար, մենք կը սիրենք խորհիլ որ իր գրութիւնը արդէնք ըլլայ միամիտ համոզումի, թէեւ շատ միակողմանի. ուստի նպատակ ունինք մի միայն լուսարանել:

ԳՈՒՇԱԿԵԱՆ ՊՏՐԻՒ Ի ԿԱՐԾԻՔԸ

Վերոյիշեալ Ն. Եպս. Ծովական, իր կարծեցեալ քննադատականին մէջ, Տիրա-մօր Յղութեան տօնին մասին՝ մեր կատարած խորհրդածութիւնները հերքելու նըպատակով, կը յենու թորգոմ Պարբ. Գուշակեանի մէկ վկայութեան վրայ: Դժբախտաբար այդ յենարանն աւելի եւս խախտու է:

Ահա՛ յիշատակուած վկայութիւնը.

«[Մարիամ] թէեւ ծնաւ բնութեան օրինաց համեմատ, այսինքն ի հօրէ եւ ի մօրէ, բայց բոլորովին զերծ՝ սկիզբէն իսկ՝ հասարակ մահկանացուաց ազամական արատաւորութենէն: Այս պատճառաւ, եկեղեցւոյ մէջ տօնելի եղաւ ոչ միայն իր ծնունդը, այլ նաեւ յղութիւնը: ... Աստ-

ուածածնի անարատութեան զաղափարը յետ ժամանակաց ծնունդ տուաւ անարատ յղութեան հարցի մը, զոր լատին եկեղեցին 1854ին ընդունեց իբր հաւատոյ վարդապետութիւն, որ սակայն մեր եկեղեցի-ին համար անընդունելի է(5):

Ն. Եպս. Ծովական այսքանով կը զոհանայ, թողլով որ մենք վերլուծենք կըտորը: Որքան որ մեզ կը մեղադրէ Գերշ. Հեղինակը, բայց ինք իսկական սարսափ մը ունի վերլուծումէ եւ հարցի մը խորը թափանցելէ:

Թորգոմ Պարբ. ի վերոյիշեալ հատուածին մէջ հինգ հաւատարմ կայ.

1. — Մարիամ ծնած է օրիֆոֆ բնութեան (ի հօրէ եւ ի մօրէ):
2. — Մարիամ գերծ է՝ սկիզբէն իսկ՝ հասարակ մահկանացուներու ազամական արատաւորութենէն:
3. — Այս պատճառով կը տօնուի Աստուածածնի ոչ միայն ծնունդը, այլ նաեւ յղութիւնը:
4. — Աստուածածնի անարատութենէն ծագած է անարատ յղութեան հարցը:
5. — Անարատ յղութեան հարցը՝ լատիններէն ընդունուած իբր հաւատոյ վարդապետութիւն (1854ին), Հայ. եկեղեցւոյ համար անընդունելի է:

Ուրեմն, ըստ Գուշակեան Պարբ. ի, Տիրամայրը՝ թէեւ յղացած ըստ բնութեան օրէնքին, բայց ունեցած է սկզբնական անարատութեան շնորհքը:

Ասիկա՛ է որ Հոռոմէական եկեղեցին կ'անուանէ «Անարատ Յղութիւն»: Ասիկա՛ է նաեւ ինչ որ մենք ջանացած էինք ներկայացնել իբրեւ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւն:

Կը դարձանանք թէ ինչո՞ւ Գուշակեան

(5) Սուրբ Է. Տոմ, Երուսաղէմ, 1939, էջ 305:

Պարբ. իր չորրորդ եւ հինգերորդ հաւատածներով կ'ուզէ անջատել սկզբնական անարատութիւնը՝ անարատ յղութենէն, եւ այս վերջինը վերագրել մի միայն լատին եկեղեցւոյ:

Հաւանօրէն, Գուշակեան Պարբ. ին համար, տարբեր զաղափարներ էին Աստուածածնի սկզբնական անարատութիւնը եւ անարատ յղութիւնը:

Այն ատեն, կը հարցնենք. ինչի՞ մէջ կը կայանայ այս երկուքին տարբերութիւնը եւ զանազանութիւնը:

Դժբախտաբար թորգոմ Պարբ. այլեւս չի կրնար պատասխանել: Կրնար խորանալ Ն. Եպս. Ծովական. ան ալ կը լռէ:

Բարեբախտաբար, ճիշտ այս հարցը լուսարանող յօդուած մը երեւցաւ վերջերս «Շողակաթ»-ի մէջ:

«ՇՈՂԱԿԱԹ»-Ի ԵԼՈՅԹԸ

Պոլսոյ Պատրիարքարանի պաշտօնաթերթը «Շողակաթ», Գ. Պ. ստորագրութեամբ յօդուածի մը մէջ, յետ «անճահ եւ աւելորդ» որակելու նախորդ տարուան մեր գրութիւնները, կու գայ հեղինակաւոր չեղով լուսարանելու թիւրիմացութիւններ:

Ահա՛ իր խօսքերը.

«[Թիւրիմացութիւն մը] Հոռոմէական եկեղեցին առաջնորդեց՝ պապական նուիրագործումով՝ հրամանակարգ վարդապետութեանց (ղոգմա) շարքին մէջ անցընելու Ս. Աստուածածնի յղութիւնը յԱՆԱՅԷ, իբրեւ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ, առանց մարդկային միջամտութեան: Ուրեմն, «ի Հոգւոյն Սրբոյ»...:

«Քրիստոնէական եկեղեցին - անխտիր բոլոր եկեղեցիները - այսպիսի հրաշալի ծնունդ մը կը ճանչնան ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ յանձին Յիսուսի, յղացեալ՝ որպէս մարդ՝ «ի Մարիամայ Սրբոյ Կուսէն» ՀՈԳԻՈՎՆ ՍՐԲՈՎ. «Հաւատարմ»:

Ահա ա՛յս յղացումն է անարատ, կամ անմիջնորդ ի մարդկանէ»:

Ապա, հեղինակը վ'անցնի վկայութիւններ հաւաքելու մեր Շարակնոցէն, եւ առանց հեղինակաւոր մեկնիչ՝ Հ. Գրբ. Աւետիքեանէն, ցոյց տալու համար որ Ս. Կոյսը մայր եղաւ Յիսուսին՝ Ս. Հոգւոյն ազդեցութեամբ միայն, անհղծ պահելով իր կուսական անարատութիւնը (= անարատ յղութիւն):

Հուսիկ կ'եղբակացնէ. «Աստուածածնի ծնունդը՝ անարատ յղութեամբ. ա՞րդեօք իրաւունք չի տար հետեւցնելու թէ իրմով Աստուածութեան Ս. Երրորդութիւնը կը վերածուի ԶՈՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ: Ա՛յս է, ըստ մեզ, անխտաւորելի հետեւանքը, Աստուածածնի մարդկայնօրէն յղութիւնը հրամանակարգ վարդապետութեանց շարքին մէջ անցընելով՝ որպէս աստուածայնօրէն (sic!) անարատ յղութիւն»(6):

Այս խօսքերուն մէջ զանազանելու է երկու կէտեր.

1. — Ճիշտ է որ բոլոր եկեղեցիներն ալ, նաեւ Հռոմէական եկեղեցին, կը դաւանին թէ Տիրամայրը միշտ պահած է իր կուսական անարատութիւնը: Այսինքն թէ Յիսուս ծնած է Ս. Կոյսէն առանց մարդկային միջամտութեան, լոկ Ս. Հոգիին ազդեցութեամբ: «Յղացար անարատաբար, եւ զԱստուած վայելչապէս ծնար» կ'երդէ մեր շարականն ալ:

2. — Սխալ է սակայն կարծել՝ թէ Հոռոմէական եկեղեցին այսպիսի հրաշապատում ծնունդ մը կը վերագրէ նաեւ Տիրամօր՝ յԱՆԱՅԷ: Վասնզի Հոռոմէական եկեղեցին երբ կը դաւանի որ Տիրամայրը անարատ յղացած է, չի հասկնար թէ Տիրամայրը ծնած ըլլայ Աննայէն՝ առանց մարդկային միջամտութեան, ոչ ալ՝ հետեւաբար՝ «ի Հոգւոյն Սրբոյ»:

Ո՛չ: Հոռոմէական եկեղեցւոյ մէջ ոչ մէկ աստուածաբան, ոչ մէկ ատեն Տիրա-

(6) Եղեղեց, անդ:

մօր վերադարձ է անհայր ծնունդ մը Ան-
նայէն:

Կը դարձանանք թէ ի՞նչպէս Գ. Պ. Պոլ-
սոյ կրօնական այդ պաշտօնաթերթին
մէջ կը հրատարակէ այդ յօդուածը, ամ-
բաստանելով Հոռոմէական Եկեղեցին, ա-
ռանց դիտարկել թէ ի՞նչ է Հոռոմէական
Եկեղեցւոյ դաւանանքին իրական իմաստը:
Եւ սակայն շատ դիւրին էր ատիկա. եթէ
լատինեանքն անմեղականաբար է իրեն, կը
բաւէր եւրոպական արդի լեզուներով կա-
թողիկէ բառարաններ կամ բարձրագոյն
Քրիստոնէականներ թերթատել: Կը բա-
ւէր, որ այդ յօդուածը գրելէն առաջ,
աչքէ անցընէր Գերերը. Վսեմ. Ծիր. Ա-
ղաճանեանի Մարեմական Կոնգակը, ուր
կ'ըսուի յստակօրէն:

«Աղամի անհնազանդութեան հետե-
ւանքով — ըստ որում արմատ էր եւ զլուսն
մարդկային ցեղին — անկէ սերող բովան-
դակ մարդկութիւնը կը ծնանի զուրկ աստ-
ուածային շնորհքէ, արատաւորուած ըս-
կըզբնական մեղքով, թշնամի Աստուծոյ
եւ զերի սատանայի. Մարիամ միայն՝
ծնած ըլլալով հանդերձ բնական սերնդա-
զործութեամբ իր ծնողաց կողմէ, Աստու-
ծոյ եղակի կարգադրութեամբ, եւ Յիսու-
սի կանխատեսուած արդիւններուն շնոր-
հիւ, վեհագոյն կերպով փրկուած, իր դո-
յութեան առաջին վայրկեանէն իսկ՝ լի է
աստուածային շնորհքով, բարեկամ Աս-
տուծոյ, անարատ յղացեալ, ազատ սկզբը-
նական մեղքէ, թշնամի սատանայի» (7):

Այսքան յստակ բանաձեւումներէ վերջ՝

(7) Թուղք Հովուական Վսեմ եւ Ամենապատիւ
Տեառն Կարգինալի Գրիգոր Պետրոս Ժե.ի
Աղաճանեան, Կաթողիկոս-Պատրիարքի Տանն
Կիլիկիոյ (1954, Փետր. 2): Պէյրութ, Հայ
Կթղ. տպ. 1954, էջ 35 — յատկապէս էջ 8:

(8) Հակիրճ քննադատական մը Շոգակաթի
սոյն յօդուածին մասին՝ տես Աւետիքի մէջ,
ԻԳ. (1955), թիւ 1-2, էջ 14-15:

Գ. Պ.ի խաւարային թարթափումները
մեզի անհասկանալի կը մնան (8):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ. Հոռոմէական Եկե-
ղեցւոյ մէջ, երբ Տիրամօր համար կ'ըսուի
անարատ յղացեալ, կը հասկցուի Ս. Կոյ-
սին գերծ ըլլալը սկզբնական մեղքէն: Այս-
տեղ յղութիւնը կ'առնուի կրաւորական
իմաստով, այսինքն՝ յղութիւն իր ծնող-
ներէն (ըստ աւանդութեան՝ Յովակիմէ եւ
Աննայէ), ու սովորաբար կ'ըսուի՝ յղու-
թիւն յԱննայէ:

Ասկէ դանաղանելու անք ներգործական
իմաստով առնուած յղութիւնը, որով Ս.
Կոյսը մայր եղաւ Յիսուսի, անարատ պա-
հելով իր կուսութիւնը (անհայր ծնունդ):
Աս ալ, հետեւաբար անարատ յղութիւն
մըն է. եւ դադարները իրարու հետ
չչփոթելու համար, լաւագոյն է այս եր-
կորդը կոչել՝ կուսական յղութիւն:

Հետեւաբար, կաթողիկէ իմաստով կ'ը-
սենք՝ թէ Տիրամայրն անարատաբար յը-
ղացած է Աննայէն, ըստ որում՝ զերծ էր
սկզբնական մեղքէն (թէեւ ծնած՝ ըստ
բնական օրէնքին): Կ'ըսենք նաեւ որ Տի-
րամայրը անարատաբար յղացած է զՅի-
սուս, ըստ որում պահած է իր մաքուր
կուսութիւնը (Յիսուս ծնած է աղղեցու-
թեամբ Ս. Հոգիին. անհայր ծնունդ):

Արդ, Գ. Պ. չփոթած եւ իրարու խոռ-
նած է անարատ յղութեան այս երկու ի-
մաստները: Մենք առաջին իմաստին վը-
րայ կեդրոնացուցած էինք մեր ուսումնա-
սիրութիւնը, ցոյց տալով որ Հայ. Եկե-
ղեցին ալ համաձայն է ասոր, հինէն ի վեր
դաւանելով Ս. Կոյսին զերծ ըլլալը սկզբը-
նական մեղքէն (այսինքն՝ Ս. Կոյսին ան-
արատ յղութիւնը Աննայէն). իսկ Գ. Պ.
կարծելով թէ Աստուածածնի կը վերա-
դրենք անհայր ծնունդ մը (Աննայէն մի-
այն) ինչպէս Յիսուսը Ս. Կոյսէն, մեզի
զէմ (ինչպէս նաեւ Հոռոմէական Եկեղեց-
ւոյ զէմ) կը պայքարի, յայտարարելով
թէ ատիկա մոլորութիւն է, ասով Երրոր-

ղութիւնը՝ Չորրորդութիւն կ'ըլլայ, եւն.
եւն... , ու կը հաւաքէ վկայութիւններ՝
որոնք կը հաւաստեն թէ միայն Յիսուսի
ծնունդն է անհայր ծնունդ: Բայց ասիկա
մերժող չկար: Խնդիրը ուրիշ կէտի վրայ
էր, ինչպէս ցուցադրեցինք:

Կը համարինք որ նոյն չփոթութիւնը
կայ նաեւ Թորգոմ Պտրք. Գուշակեանի
մօտ, քանի որ մէկ կողմէն՝ յայտնապէս
կ'ընդունի Տիրամօր զերծ ըլլալը սկզբնա-
կան մեղքէն (ինչ որ Հոռոմէական Եկեղե-
ցին կ'անուանէ՝ Անարատ յղութիւն), եւ
միւս կողմէն՝ յայտնապէս կը ժխտէ Տի-
րամօր անարատ յղութիւնը (անշուշտ
Գ. Պ.ի իմաստով բարոնուած, այսինքն՝
իրը անհայր ծնունդ կամ յղութիւն յԱն-
նայէ):

Հետեւաբար, մեր կարծիքով՝ Գուշակ-
եանի եւ Գ. Պ.ի չփոթութիւնը աւելի ե-
զրններու տարբեր առումներուն մէջ է,
քան թէ խորհուրդին էութեան մէջ:

Միեւնոյնը պիտի չհամարձակինք ըսել
նկատմամբ Ն. Եպս. Ծովականի (տ'ես

վերը թիւ 5 եւ 6), քանի որ ինք Տիրամօր
մէջ կը դնէ սկզբնական մեղքը (հակառակ՝
Գուշակեանի), իսկ անոր ջնջումը կը դնէ
Աւետման օրը (հակառակ՝ Տաթեւացիի):
Ուստի Ն. Եպս. Ծովական կը չեղի նաեւ
իր իսկ հարադատ վարդապետներու գի-
ծէն եւ ուղղութենէն: Եւ դարձանալին
հոն է՝ որ անոնցմէ վկայութիւններ կը
հաւաքէ, առանց անոնց իմաստները խո-
րապէս քննելու:

Ամէն պարագայի մէջ, Անարատ Յղու-
թեան ճշգրիտ եւ յստակ դադարաբար, վե-
րի մանրամասն բացատրութիւններով
ներկայացուած, պէտք էր արդէն իսկ ծա-
նօթ ըլլալ բոլոր անոնց՝ որ այս նիւթին
չուրջ կը գրեն, ու մանաւանդ՝ աստուա-
ծաբանի հեղինակաւոր շեշտով՝ կը յան-
դըզնին թիւրիմացութիւններ հարթել:

Ուրախ պիտի ըլլանք՝ եթէ այսու փոք-
րիկ լուսարանութիւն մը եւ իրարհասկա-
ցողութիւն մը ստեղծուի:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Տ Ա Յ Ի Ր . . .

Տայի՛ր Աստուած իմ, որ ըլլայի գէ'թ,
Սափոր մը խաղաղ շուշանին ա'յս հէք,
Որ չըթառամէր — թօշնէր ահաբեկ,
Հողմերէն վայրազ աշնան մահաբոյր...:

Տայի՛ր Աստուած իմ, որ ըլլայի գէ'թ,
Պուրակ մը թաղուն հիւղակի մը մօտ —
Ուր բիւր թռչուններ դային անծանօթ,
Թառելու անոր ոստերուն վըրայ...:

Փարիզ, 25 — 2 — 1955

Տայի՛ր Աստուած իմ, որ ըլլայի գէ'թ,
Ովկեան մը անհուն, խորունկ, անյատակ,
Ուր լուսինը դար գիշերն հերարձակ,
Սըփոռելու մաղերն՝ երեսիս վըրայ...:

Տայի՛ր Աստուած իմ, որ գէ'թ ըլլայի,
Յօղ մը գիշերուան այգուն դէմ բողբոջ.
Որ ծաղկի մ' վըրայ շողայի դողդոջ.
Ու ա'լ չըլլայի'...:

Յ. ՏԱՊԱԼԵԱՆ